

Մրցույթի հայտարարություն

ՀՀ Սյունիքի մարզի «Շամբի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319 –Ն որոշմամբ հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության

/նշանակման/ կարգի 2-րդ կետի համաձայն «Շամբի միջնակարգ դպրոց» և «Որոտանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների կողմից կառավարման մարմինը՝ միացյալ խորհուրդը հայտարարում է մրցույթ տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1/ ՀՀ քաղաքացիությունը

2 Ուսումնական հաստատության կառավարման իրավունքը/հավաստագիր/

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է

1/ դիմում հաստատության խորհրդի նախագահի անունով

2/ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր կամ նույնականացման քարտի պատճենը:

3/ հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը

4/ տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով

5/ ինքնակենսագրություն

Փաստաթղթերի պատճենը պետք է ներկայացնել բնօրինակի հետ

Փաստաթղթերն ընդունվում է «Շամբի միջն. դպրոց» ՊՈԱԿ-ում 2021 թվականի նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 03-ը ներառյալ ամեն օր ժամը 9°-ից մինչև ժամը 15°-ը, բացի հանգստյան/շաբաթ, կիրակի/ և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թ-ի դեկտեմբերի 17-ին ժամը 12-ին «Շամբի միջն. դպրոց» ՊՈԱԿ –ում:

Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, գ. Շամբ, փող. 3, շենք 21:

Տեղեկությունների համար դիմել՝ խորհրդի կողմից լիազորված անդամ , Ն.Խաչատրյանին

Հեռ. 094324658 Էլ. Հասցե shamb@schools.am